«Ֆոր Էյ Քնսալթինգ» ՓԲԸ "Four A Consulting" CJSC

audit accounting advisory assurance

ՀԱՊ ՀԿ Ռեեստր 1 20 0219
Հասցե Նալբանդյան 50/136 , ք Երևան ՀՀ,
Հեռախոս +374(10) 52 08 47

www. 4aconsulting.am
info@4aconsulting.am

CAA NGO Register 1 20 0219
Address Nalbandyan 50/136, Yerevan, RA
Telephone +374(10) 52 08 47

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Տ-ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՓԲԸ-ի բաժնետիրոջը,

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Տ-ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՓԲԸ-ի (Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2023թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով տալիս են Ընկերության 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքի և դրամական միջոցների հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն փոքր եւ միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտին (ՓՄԿ-ների ՖՀՄՍ):

Կարծիքի հիմք

Աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ "*Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար*" բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի Միջազգային Ստանդարտների Խորհրդի կողմից հրապարակված "Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի կանոնագրքի" (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների և Հայաստանի հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ֆինանսական հաշվետվությունների համար ղեկավարության և կառավարման լիազոր անձանց պատասխանատվությունը

Ղեկավարությունը պատասխանատվություն է կրում ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար, որոնք տալիս են ճշմարիտ և իրական պատկեր ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ի համաձայն, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելուհամար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատության վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Ընկերությունը լուծարելու կամ Ընկերության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլ ընտրանք:

Կառավարման լիազոր անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավականաչափ և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի շրջանցում.
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը:
  Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:

Կառավարման լիազոր անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

17 հուլիսի 2024թ.

Անիկ Մարտիրոսյան
Տնօրեն-Բաժնետեր/ Աուդիտի ղեկավար

«ՖՈՐ Է ՔՆՍԱԼԹԻՆԳ»
"FOUR A CONSULTING"
00148693

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

ԱԿՏԻՎ		31.12.2023թ.	31.12.2022թ.
I. Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	523,625	275,618
Ոչ նյութական ակտիվներ	5	199	270
Ասոցացված կազմակերպություններ	6	1,622,978	-
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		**2,146,802**	**275,888**
II. Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	7	1,476,747	1,691,479
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	8	1,461,048	2,210,554
Շահութահարկի գծով կանխավճար		91,660	-
Տրված փոխառություններ	9	1,603,456	2,837,218
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	10	126,797	48,048
		4,759,708	**6,787,299**
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		**6,906,510**	**7,063,187**
ՊԱՍԻՎ			
III. Սեփական կապիտալ			
Կանոնադրական կապիտալ	11	1	1
Կուտակված շահույթ		835,427	1,328,212
Ընդամենը սեփական կապիտալ		**835,428**	**1,328,213**
IV. Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Երկարաժամկետ վարկեր	13	282,350	-
Հետաձգված հարկային պարտավորություն	12	6,910	16,583
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		**289,260**	**16,583**
V. Ընթացիկ պարտավորություններ			
Բանկային վարկեր	14	1,336,122	1,869,546
Ստացված փոխառություններ	15	2,421,232	2,354,791
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	16	1,904,696	1,355,146
Շահութահարկի գծով պարտավորություն		-	22,953
Ընթացիկ պահուստ	17	119,772	115,955
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		5,781,822	5,718,391
ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		**6,906,510**	**7,063,187**

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2024թ. հուլիսի 17-ին:

Տնօրեն՝ Հայկ Սուքիասյան
Գլխավոր հաշվապահ՝ Մկոյան Անի Գագիկի
ՀԳԳՀ 3230815

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 24-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Ցուցանիշի անվանումը		2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Իրացումից հասույթ	18	5,468,672	4,457,621
Վաճառքի ինքնարժեք	19	-5,184,077	-3,453,688
Համախառն շահույթ		284,595	1,003,933
Այլ եկամուտներ	20	55,715	49,345
Իրացման ծախսեր	21	-6,111	-12,161
Վարչական ծախսեր	22	-436,812	-205,488
Այլ ծախսեր	23	-88,133	-57,258
Գործառնական շահույթ		-190,746	778,371
Ֆինանսական եկամուտ		-	18,737
Ֆինանսական ծախսեր		-293,749	-204,967
Փոխարժեքային տարբերությունից օգուտ/(վնաս)	24	-13,790	-110,271
Շահույթը մինչև հարկերը	25	-498,285	481,870
Շահութահարկի գծով ծախս		5,500	-90,533
Զուտ շահույթ		-492,785	391,337
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ			
Հոդվածներ, որոնք հետագայում չեն վերադասակարգվի շահույթին կամ վնասին			
Հոդվածներ, որոնք հետագայում կվերադասակարգվեն շահույթին կամ վնասին			
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ հարկումից հետո		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ		-492,785	391,337

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 24-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

	Կանոնադրական կապիտալ	Կուտակված շահույթ	ընդամենը
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1	936,875	936,876
Տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		391,337	391,337
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1	1,328,212	1,328,213
Տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-492,785	-492,785
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1	835,427	835,428

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 24-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազ. դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից		
Դրամական միջոցներ առևտրային գործունեությունից	*7,604,887*	*5,995,077*
Դրամական միջոցներ այլ գործառնական գործունեությունից	*356*	*1,128*
Վճարումներ մատակարարներին ապրանքների և ծառայությունների դիմաց	*-3,669,960*	*-3,518,799*
Վճարումներ աշխատակիցներին և հօգուտ նրանց	*-1,259,783*	*-666,560*
Վճարումներ այլ գործառնական ծախսերի դիմաց	*-1,289,126*	*-966,056*
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսք	*1,386,374*	*844,790*
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից		
Վճարումներ հիմնական միջոցների ձեռքբերման դիմաց	*-16,690*	*-59,589*
Ֆինանսական վարձակալությունից դրամական միջոցների հոսք	*-80,069*	
Ձեռնարկատիրական գործունեության ձեռք բերում	*-1,622,978*	
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսք	*-1,719,737*	*-59,589*
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսական գործունեությունից		
Դրամական միջոցներ փոխառություններից – բաժնետերեր և կապակցված կողմեր	*10,358,857*	*6,407,893*
Փոխառությունների մարում – բաժնետերեր և կապակցված կողմեր	*-9,789,884*	*-5,568,218*
Դրամական միջոցներ սեփական/բաժնետիրական կապիտալում ներդրումներից, շահաբաժնի բաշխում	*-112,013*	*-1,369,453*
Դրամական միջոցների ներհոսք/(արտահոսք) այլ ֆինանսական գործունեությունից	*-*	*-268,035*
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսք	*456,960*	*-797,814*
Դրամական միջոցների զուտ աճ/նվազում	*123,597*	*-12,613*
Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի սկզբում	*8,048*	*20,601*
Արտարժույթի փոխարժեքային տարբերությունների զուտ արդյունք	*-4,848*	*60*
Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջում	*126,797*	*8,048*

Դրամական միջոցների հոսքի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 24-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1. **Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն**

«Տ-ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՓԲԸ (այսուհետ՝ Ընկերություն) ստեղծվել է 2016թ թվականի ապրիլին, գրանցման համարը 273.120.908003, գրանցված ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից 29.04.2016թ:

Ընկերության կանոնադրությունը հաստատվել է 2016թ-ին, ՓԲԸ-ի միակ հիմնադիր ,Տաշիր Կապիտալ ՓԲԸ բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ:

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 1000 դրամ: Ընկերության բոլոր բաժնետոմսերը տեղաբաշխված են և սեփականության իրավունքով ամրագրված միակ բաժնետիրոջը:

Ընկերությունը գրանցվել է հարկային տեսչությունում և ստացել հարկ վճարողի հաշվառման համար 02648403:

14.06.2021թ-ից Ընկերության միակ բաժնետեր է հանդիսանում Կարապետյան Արմեն Ազատի:
Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է տնօրենը:

Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն 31.12.2023թ դրությամբ իրականացրել է տնօրենը՝ Հայկ Սուքիասյանը:

Ընկերության գտնվելու վայրն է ՀՀ, Լոռու մարզ, ք. Տաշիր, Դպրոցականների փող., շենք 13ա, բն 16:

Աշխատակիցների ցուցակային թվաքանակը 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 106 անձ, իսկ 2023թ. դրությամբ այն կազմել է 92 անձ:

2. **Պատրաստման հիմքերը**

2.1 **Համապատասխանություն**

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են փոքր եւ միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտին (ՓՄԿ-ների ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից:

2.2 **Ճանաչման հիմքեր**

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով, բացառությամբ որոշ ֆինանսական գործիքների, որոնք ներկայացված են իրական արժեքով:

2.3 **Գործառնական և ներկայացման արժույթ**

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Ընկերության գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Ընկերության գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ ղեկավարության համոզմամբ այս արժույթն առավել օգտակար է Ընկերության ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

2.4 **Գնահատումների և դատողությունների կիրառում**

ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Ընկերության ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա: Առավել մեծ դատողություն պահանջող և բարդություն ներկայացնող էական ոլորտները, կամ այն ոլորտները, որտեղ ենթադրություններն ու գնահատումներն էական են ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտված են [illegible] ծանոթագրություն 26-ում:

2.5 Ներդրումներ ասոցիացված կազմակերպությունում

Ասոցիացված կազմակերպությունում ներդրումները չափվում են բաժնեմասնակցության մեթոդով: Ասոցիացված կազմակերպությունում ներդրումների հաշվեկշռային արժեքն աճեցվում կամ նվազեցվում է ասոցիացված կազմակերպության շահույթում կամ վնասում և այլ համապարփակ արդյունքում Ընկերության շահաբաժինը ճանաչելու համար՝ անհրաժեշտության դեպքում ճշգրտելով գումարները, որպեսզի ապահովվի Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությանը համապատասխանությունը:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

3.1 Արտարժույթ

Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Ընկերության համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված միջին փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված միջին փոխարժեքը: Իրական արժեքով հաշվառվող և արտարժույթով սահմանված ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են գործարքի օրվա դրությամբ գործող փոխարժեքով: Ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում: Ստորև ներկայացված են ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված միջին փոխարժեքները.

	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ռուբլի	4,50	5.59
ԱՄՆ դոլար	404,79	393.57
Եվրո	447,9	420.06

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում: Իրական արժեքով արտահայտված ոչ դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ներառվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում:

3.2 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ: Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են շահույթի կամ վնասի և այլիամապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցիօգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

N	Հիմնական միջոցներ	տարի
1	Շենքեր, շինություններ	20
2	Մեքենաներ և սարքավորումներ	8
3	Արտադրատնտեսական գույք	5
4	Համակարգչային տեխնիկա	1:

3.3 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Ընկերության կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները: Ամորտիզացիան ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում:

3.4 Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում

Անորոշ օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվները չեն ամորտիզացվում և յուրաքանչյուր տարի ենթարկվում են արժեզրկման ստուգման
Մաշվող ակտիվները արժեզրկման համար վերանայվում են, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:
Փոխհատուցվող գումարը վաճառքի զուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը:
Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլինի, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեն: Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

3.5 Վարձակալված ակտիվներ

Գործառնական վարձակալության գծով վճարները ճանաչվում են որպես ծախս՝ գծային հիմունքով: Վարձակալության հետ կապված ծախսերը, ինչպիսիք են պահպանման և ապահովագրության ծախսերը, ծախսագրվում են իրականացման պահին:

3.6 Պաշարներ

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը հաշվարկվում է՝օգտագործելով միջին կշռված մեթոդը, և ներառում է պաշարների ձեռքբերման, ինչպես նաև դրանք իրենց ներկայիս վիճակին և գտնվելու վայր հասցնելու ծախսերը:

3.7 Ֆինանսական գործիքներ

Ճանաչում և ապաճանաչում

Ֆինանսական ակտիվները կամ ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Ընկերությունը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվները ապաճանաչվում են, երբ ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները լրանում են, կամ երբ ֆինանսական ակտիվները և բոլոր նշանակալից ռիսկերը և հատուցումները փոխանցվում են:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, ենթակա չեն վճարման, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվների դասակարգում և սկզբնական չափում:

Ֆինանսական ակտիվները բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ,
- մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ,
- փոխառություններ և դեբիտորական պարտքեր:

Ֆինանսական ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ վերագրվում են տարբեր

կատեգորիաների՝ կախված գործիքի բնույթից և նպատակից: Ֆինանսական գործիքի կատեգորիան համապատասխանեցվում է այն սկզբունքին, որով չափվում է տվյալ գործիքը և այն հանգամանքին, թե արդյոք առաջացող եկամուտը և ծախսերը ճանաչվում են շահույթում կամ վնասում, թե ուղղակիորեն այլ համապարփակ

Ֆինանսական ակտիվների հետ կապված բոլոր ծախսերը և եկամուտները որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում, ներկայացվում են "Ֆինանսական ծախս", "Ֆինանսական եկամուտ" կամ "Այլ ֆինանսական արդյունքներ" հոդվածներում, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման, որը ներկայացվում է "Այլ ծախսեր" հոդվածում:

I. Ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով

Ֆինանսական ակտիվները՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, ներառում են առևտրային նպատակով պահվող ֆինանսական ակտիվները կամ այն ֆինանսական ակտիվները, որոնք որպես չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով դասակարգվել են Ընկերության կողմից՝ սկզբնական ճանաչման ժամանակ: Բոլոր ածանցյալ ֆինանսական գործիքները, որոնք ենթակա չեն հեջավորման, դասակարգվում են այս կատեգորիայում:

Ածանցյալ ֆինանսական գործիքների գծով առաջացած ցանկացած օգուտ կամ վնաս հիմնված է իրական արժեքի փոփոխության վրա, որը որոշվում է՝ ուղղակիորեն վկայակոչելով գործող շուկայում գործարքները կամ գործող շուկայի բացակայության դեպքում՝ գնահատման մեթոդի միջոցով:

II. Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները չափվում են իրական արժեքով՝ իրական արժեքի փոփոխությունները ուղղակիորեն ճանաչելով այլ համապարփակ արդյունքներում: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների կատեգորիայում դասակարգված ֆինանսական գործիքներից առաջացած օգուտը կամ վնասը ճանաչվում է շահույթում կամ վնասում այն դեպքում, երբ նշված ակտիվները վաճառվում են կամ երբ ներդրումն արժեզրկվում է: Արժեզրկման դեպքում ցանկացած վնաս, որը նախկինում ճանաչվել էր այլ համապարփակ արդյունքներում, փոխանցվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն: Սեփական կապիտալի գործիքներից առաջացած և համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված վնասները չեն հակադարձվում համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, այլ ճանաչվում են սեփական կապիտալում:

III. Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ

Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները ֆիքսված կամ որոշելի վճարումներով, ֆիքսված մարման ժամկետով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ են և ներառում են առևտրային բանկերում ավանդները: Ներդրումները դասակարգվում են որպես մինչև մարման ժամկետը պահվող, եթե Ընկերության ղեկավարությունը մտադրված է պահել դրանք մինչև դրանց մարման ժամկետը:

IV. Փոխառություններ և դեբիտորական պարտքեր

Փոխառություններն ու դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ են, որոնքչեն գնանշվում ակտիվ շուկայում և ներառում են առևտրային և այլ դեբիտորական պարտքերը, ինչպես նաև մնացորդները դրամարկղում և բանկերում:

V. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Ընթացիկ դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով: Հետագայում դրանք հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ հանած արժեզրկման պահուստը: Առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման պահուստը ստեղծվում է այն ժամանակ, երբ առկա է օբյեկտիվ ապացույց, որ Ընկերությունը սկզբնապես սահմանված ժամկետներում չի կարող հավաքագրել վերադարձման ենթակա բոլոր գումարները: Դեբիտորի զգալի ֆինանսական դժվարությունները, վճարման հետաձգումը և վճարումների ուշացումները ցուցանիշ են այն բանի, որ առևտրային դեբիտորական պարտքն արժեզրկված է: Պահուստի գումարը ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի տարբերությունն է:

Պահուստի մնացորդը ճշգրտվում է հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ ծախսի կամ եկամտի ճանաչման միջոցով: Հաճախորդի հաշվի մնացորդից դուրս գրվող ցանկացած գումար նվազեցվում է առկա կասկածելի դեբիտորական պարտքի պահուստից: Բոլոր դեբիտորական պարտքերը, որոնց հավաքագրումը գնահատվում է

անհավանական, դուրս են գրվում:

VI. Մնացորդներ դրամարկղում և բանկերում

Մնացորդները դրամարկղում և բանկերում ներառում են կանխիկ միջոցները, բանկային հաշիվների մնացորդները:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական ակտիվները, բացառությամբ այն ֆինանսական ակտիվների՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, գնահատվում են արժեզրկման հայտանիշի առկայության համար: Ֆինանսական ակտիվներն արժեզրկված են, եթե առկա է անկողմնակալ վկայություն, որ ֆինանսական ակտիվների սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ մի քանի իրադարձություններ ազդել են ակնկալվող դրամական միջոցների հոսքերի վրա:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման կորուստը հաշվառվում է ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերությամբ: Բոլոր ֆինանսական ակտիվների համար արժեզրկումից կորուստն ուղղակիորեն նվազեցվում է ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքից, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի, որոնց հաշվեկշռային արժեքը նվազեցվում է կասկածելի պարտքի պահուստի միջոցով:

Բացառությամբ վաճառքի համար մատչելի սեփական կապիտալի գործիքների, եթե հետագա ժամանակաշրջանում արժեզրկման կորուստը նվազում է և նվազումը օբյեկտիվորեն կարելի է վերագրել արժեքի իջեցումից հետո տեղի ունեցած դեպքերին, ապա նախկինում ճանաչված արժեզրկման կորուստը հակադարձվում է՝ ճանաչվելով համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն չափով, որ հակադարձումը չհանգեցնի ֆինանսական ակտիվի այնպիսի հաշվեկշռային արժեքի, որը գերազանցի այն ամորտիզացված արժեքը, որը կլիներ, եթե այդ ֆինանսական ակտիվի արժեքի իջեցման հակադարձման ամսաթվի դրությամբ արժեզրկում ճանաչված չլիներ:

Ֆինանսական պարտավորությունների դասակարգում և սկզբնական չափում

Ընկերության ֆինանսական պարտավորությունները ներառում են վարկերը, փոխառությունները, առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը:

I. Վարկեր և փոխառություններ

Վարկերը և փոխառությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ առանց գործարքային ծախսերի: Սկզբնական ճանաչումից հետո փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով, իսկ այս արժեքի և մարման արժեքի միջև տարբերությունը փոխառության ժամկետի ընթացքում ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով: Տոկոսավճարները և փոխառությունների հետ կապված այլ ծախսերը ծախսագրվում են կատարմանը զուգահեռ՝ որպես ֆինանսական ծախսերի մի մաս, բացի որակավորվող ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանն ուղղակիորեն վերագրվող փոխառության ծախսումներից, որոնք կապիտալացվում են որպես այդ ակտիվի արժեքի մաս:

II. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

3.8 **Սեփական կապիտալ**

Ընկերության կողմից թողարկվող կապիտալի գործիքները հաշվառվում են անվանական արժեքով: Տեղաբաշխված բաժնետոմսերի վաճառքի գնի և անվանական արժեքի տարբերությունը ներկայացվում է որպես էմիսիոն եկամուտ:

Սովորական բաժնետոմսերին անմիջականորեն վերագրվող ծախսերը ճանաչվում են որպես սեփական կապիտալի նվազեցում:

Շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն այն ժամանակաշրջանում, երբ դրանք հայտարարվում են:

3.9 **Հատուցումներ աշխատակիցներին**

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումները ներառում են աշխատավարձերը, կարճաժամկետ փոխհատուցելի բացակայությունները (ինչպիսիք են, օրինակ, վճարովի տարեկան արձակուրդները և հիվանդության հետ կապված վճարովի արձակուրդները) և պարգևավճարները:

3.10 Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը:

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Ընկերությունը կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնց կիրառման մեջ լինելն ակնկալվում է ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումն արտացոլում է հարկային հետևանքները, որոնք երևան են գալու կախված այն եղանակից, որով Ընկերությունը հաշվետու ամսաթվի դրությամբ ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

3.11 Հասույթի ճանաչում

Հասույթն առաջանում է պատվիրատուի կողմից շինարարական աշխատանքների պատվերների կատարումից և հանդիսանում է որպես կապալառու ընկերություն:

4. Հիմնական միջոցներ

Հազար դրամ	Շենքեր, շինություններ	Սարքավորումներ	արտադրական Արտադրական և տնտեսական գույք	Հող	ընդամենը
Սկզբնական արժեք					
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	155,727	61,392	51,326	27,360	295,805
Ավելացում		17,046	47,137		64,183
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	155,727	78,438	98,463	27,360	359,988
Ավելացում		1,612	325,389		327,001
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	155,727	80,050	423,852	27,360	686,989
Կուտակված մաշվածություն					
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	84	14,053	11,625		25,762
Տարվա ծախս	7,786	21,854	28,968		58,608
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	7,870	35,907	40,593		84,370
Տարվա ծախս	7,786	14,402	56,806		78,994
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	15,656	50,309	97,399		163,364
Հաշվեկշռային արժեք					
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	147,857	42,531	57,871	27,360	275,618
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	140,071	29,741	326,453	27,360	523,625

5. Ոչ նյութական ակտիվներ

Սկզբնական արժեք	Լիցենզիաներ
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	562
Ավելացում	-
2022թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ	562
Ավելացում	-
2023թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ	562
Կուտակված մաշվածություն	
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	222
Տարվա ծախս	70
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	292
Տարվա ծախս	71
Կուտակված մաշվածություն	363
Հաշվեկշռային արժեք	
2022թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ	270
2023թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ	199

6. Ասոցացված կազմակերպություններ

	31.12.2023թ.	31.12.2022թ.
Ձեռնարկատիրական գործունեության ձեռք բերում	1,622,978	-

Համաձայն 06,06,2023թ. կնքված բաժնետոմսերի առուվաճառքի պայմանագրի ընկերությունը <Կոմբրիա Մենեջմենթ Էս Էյ> օտարերկրյա կազմակերպությունից ձեռք է բերել <Կասկադ Էներգոպրոգրես ՓԲԸ-ի 194 հատ հասարակ անվանական բաժնետոմսեր: Բաժնետոմսերի արժեքը կազմում է 4,200,000 ԱՄՆ դոլար, համարժեք 1,622,978 հազար դրամ:

Ընկերությունը հանդիսանում է <Կասկադ Էներգոպրոգրես> ՓԲԸ-ի 194 հատ հասարակ անվանական բաժնետոմսերի սեփականատեր, բաժնեմասը կազմում է 19,4 տոկոս:

7. Պաշարներ

	31.12.2023թ.	31.12.2022թ.
Նյութեր	144,021	286,717
Ծինանյութ	791,380	873,644
Արագամաշ առարկաներ	11,423	1,093
Անավարտ աշխատանքներ	529,923	530,025
Ընդամենը	1,476,747	1,691,479

8. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

	31.12.2023թ.	31.12.2022թ.
Առևտրային դեբիտորական պարտքեր	895,241	1,661,196
Այլ դեբիտորական պարտքեր		116,659
Անհավաքելիության գծով պահուստ	-	-
Ընդամենը ամորտիզացված արժեքով չափով ֆինանսական ակտիվներ	895,241	1,777,855
Տրված կանխավճարներ	498,108	424,378
Տրված կանխավճարներ հարկերի գծով	63,885	5,764
Այլ տրված կանխավճարներ	3,814	2,557
Ընդամենը առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	**1,461,048**	**2,210,554**

9. Տրված փոխառություններ

Փոխառության շարժը ներկայացված է ստորև.

Մնացորդ 31.12.2022	2,837,218
ավելացում	582,614
մարում	-1,816,376
Մնացորդ 31.12.2023	1,603,456

Փոխառություններն անտոկոս ցպահանջ տրամադրվել են հետևյալ գործընկերին.

Գործընկեր	31.12.2023թ	Մն. 31.12.2022թ
Դելֆոս ՓԲԸ	729	716
Արմեն Կարապետյան	1,416,707	2,232,000
Տ-Մ ՓԲԸ /Տ-Մետալ/	10	10
Ֆկս ՓԲԸ	5,930	3,460
Խաչատուրյան Մարիա Հրաչիկի	5,000	-
Տեքս ՓԲԸ	3,300	-
Բի Էմ Սի Պրոջեքթ ՓԲԸ /Պրոբեատոն/	171,780	139,400
Արմհոլդինգ ՓԲԸ	-	461,632
	1,603,456	**2,837,218**

10. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

	31.12.2023թ.	31.12.2022թ.
Դրամական միջոցներ բանկերում	120,255	5,593
Կանխիկ միջոցներ դրամարկղում	6,542	2,455
Ավանդ բանկերում	-	40,000
	126,797	**48,048**

11. Սեփական կապիտալ

Կանոնադրական կապիտալ

Ընկերության կանոնադրական կապիտալը 31.12.2023թ դրությամբ կազմել է 1 հազ. դրամ, որը բաժանված է 1 բաժնեմասի՝ 1.000 դրամ անվանական արժեքով:

12. Հետաձգված հարկային պարտավորություն

Հետաձգված հարկերի շարժը հետևյալն է.

	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Մնացորդ տարեսկզբին	16,583	26,067
Համապարփակ ֆին. հաշվետվությունում ճանաչված փոխհատուցում	-9,673	-9,484
Մնացորդ տարեվերջին	6,910	16,583

2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

Հետաձգված հարկային ակտիվ	2022թ դեկտեմբերի 31	Համապարփակ ֆինանսական հաշվետվությունում ճանաչված փոխհատուցում	2023թ դեկտեմբերի 31
Արձակուրդի պահուստ	-20,872	-687	-21,559
Հետաձգված պարտավորություն ՀՄ-ի գծով	37,455	-8,986	28,469
արդյունք	16,583	-9,673	6,910

Հետաձգված հարկային ակտիվ	2021թ դեկտեմբերի 31	Համապարփակ ֆինանսական հաշվետվությունում ճանաչված փոխհատուցում	2022թ դեկտեմբերի 31
Արձակուրդի պահուստ	-	-20,872	-20,872
Հետաձգված պարտավորություն ՀՄ-ի գծով	26,067	11,388	37,455
արդյունք	26,067	-9,484	16,583

13. Երկարաժամկետ վարկեր

Մնացորդ 31.12.2022	-
Ավելացում	719,676
Մարում	-437,326
Մնացորդ 31.12.2023	282,350

282,036

Ֆինանսական վարձակալությունը ստացվել է ԱԿԲԱ բանկից և Արմենիա Լիզինգ Քամփնի ՈՒՎԿ ՓԲԸ-ից.

	Տրմադրման ա/թ	Մարման ա/թ	Պայմ. գումար	Արժույթ	Դրույք	Վարկի մնացորդ և տոկոս Հազ. դրամ
Արմենիա Լիզինգ Քամփնի ՈՒՎԿ ALC00792LO	15.08.2023	07.06.2027	362,122	ԱՄՆ դոլար	12.9	139,600
ԱԿԲԱ բանկ ՓԲԸ	31.10.2023	10.11.2026	137,206	ԱՄՆ դոլար	11	142,436

14. Կարճաժամկետ վարկեր

Մնացորդ 31.12.2022	1,869,546
Մնացորդ 31.12.2023	1,336,122

ԱԿԲԱ բանկ ՓԲԸ-ից ստացված վարկերը ներկայացված են ստորև.

Պայմանագրի N	Տրմադրման ա/թ	Մարման ա/թ	Պայմ. գումար	Արժույթ	Դրույք	Վարկի մնացորդ Հազ. դրամ	Վարկի մնացորդ Հազ. դրամ
297178	16.03.2023	16.01.2024	300,000	Հազ. դրամ	14	300,000	33,370

Այդի բանկից ստացել է միանվագ վարկ 1,000,000 հազ դրամ չափով, 12.75 տոկոսադրույքով, մարման ժամկետը 29.04.2024թ.: 31.12.2023թ. դրությամբ մնացորդը կազմում է 968,000 հազար դրամ, հաշվեգրված տոկոսի մնացորդը կազմում է 4,015 հազ. դրամ:

30,737 հազ. դրամը իրենից ներկայացնում է Արմենիա Լիզինգ Քամփնի ՈՒՎԿ-ից ստացված ֆինանսական վարձակալության կարճաժամկետ մասը:

15. Ստացված փոխառություններ

Մնացորդ 31.12.2022	2,354,791
Մնացորդ 31.12.2023	2,421,232

Ընկերությունն անտոկոս ցպահանջ փոխառությունները ստացել է հետևյալ ընկերություններից.

Անվանում	Մն 31.12.2023	Մն. 31.12.2022
ՏԵՖՖԻ ՓԲԸ	-	24,500
Վոլիոս ՓԲԸ	-	600
Դակիա ՓԲԸ/ՌՈՍԿԱԲԵԼ ԱՐՄԵՆԻԱ ՓԲԸ	143,000	143,000
Տեքս ՓԲԸ	244,658	556,646
Արմհոլդինգ սերվիսիզ քո ՓԲԸ	9,000	9,000
Էլ-Տեխ ՍՊԸ	282,338	179,423
Ինտեկո էներգո ՓԲԸ	1,390,322	888,866
Էներգանորոգում ԲԲԸ	306,914	448,456
Բրայթ Այդիաս ՍՊԸ	-	100,000
Տ-Տելեկոմ ՍՊԸ	-	4,300
ԷՅՉ ԷՆԵՐՋԻ ՍՈԼՅՈՒՇՆՍ ՍՊԸ	45,000	-
ընդամենը	2,421,232	2,354,791

16. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

հազ. դրամ	2023թ.	2022թ.
Առևտրային կրեդիտորական պարտքեր	972,061	550,169
Այլ կրեդիտորական պարտքեր	107,972	43,531
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ	1,080,033	593,700
Կանխավճարներ հաճախորդներից	679,118	494,012
Վճարվելիք հարկեր	143,814	155,127
Այլ	1,731	294
Հիմնադրին	-	112,013
	1,904,696	1,355,146

17. Այլ ընթացիկ պահուստներ

	2023թ.	2022թ.
Չօգտագործված արձակուրդի պահուստ	119,772	115,955

18. Հասույթ

Հազ.դրամ	2023թ.	2022թ.
Աշխատանքների կատարումից	4,968,030	4,443,425
Ապրանքների վաճառքից հասույթ	500,642	14,196
	5,468,672	4,457,621

19. Վաճառքի ինքնարժեք

Հազ. դրամ	2023թ	2022թ
Աշխատանքի ինքնարժեք	4,695,434	3,439,680
Ապրանքների վաճառքի ինքնարժեք	488,643	14,008
	5,184,077	3,453,688

20. Այլ եկամուտներ

Հազ. դրամ	2023թ	2022թ
Վարձակալությունից	26,163	30,590
Պաշարների արժեքի փոփոխությունից	1,874	1,021
Տույժ, տուգանքներից	11,066	3,336
Անհատույց ստացած	9,350	13,735
Տոկոսային եկամուտներ	6,807	-
Այլ եկամուտ	455	663
	55,715	49,345

21. Իրացման ծախսեր

հազ. դրամ	2023թ.	2022թ.
ՀՄ մաշվածություն	231	247
Մարկետինգի և գովազդի ծախսեր	5,880	11,914
	6,111	12,161

22. Վարչական ծախսեր

	2023թ.	2022թ.
Աշխատանքի վճարման ծախսեր	181,335	122,744
ՀՄ-ների մաշվածության և նորոգման ծախսեր	6,433	5,487
Գրասենյակային և կոմունալ	38,107	28,651
Չփոխհատուցվող ծախսերից	100,403	
Աուդիտորական և բանկային ծախսեր	97,113	45,396
Ապահովագրություն	6,877	
Այլ	6,544	3,210
	436,812	**205,488**

23. Այլ ծախսեր

հազ. դրամ	2023թ.	2022թ.
Ծախսեր տույժ, տուգանքներից	60,472	18,465
Վարձակալություն	8,506	1,981
Անհատույց տված ակտիվներ	5,000	5,018
Այլ	14,155	31,794
	88,133	57,258

24. Փոխարժեքային տարբերությունից օգուտ/(վնաս)

	2023թ.	2022թ.
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը		
Դրամական միջոցներ	-243	415
Առևտրային դեբիտորական պարտքեր	-608	-9,681
Տրված փոխառություններ	-14,867	-101,541
Վարկեր և փոխառություններ	1,205	-
Առևտրային կրեդիտորական պարտքեր	723	536
	-13,790	**-110,271**

25. Շահութահարկի գծով ծախս

	2023թ. դեկտեմբերի	2022թ. դեկտեմբերի
Ընթացիկ հարկ	4,173	100,017
Հետաձգված հարկային պարտավորություն	-9,673	-9,484
	-5,500	90,533

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)
Շահույթ մինչև հարկումը	-488,568		481,870	
Շահութահարկ՝ 18% դրույքաչափով (2022թ.՝ 18%)	-87,942	-18.00	86,737	18.00
Չնվազեցվող ծախսի ազդեցությունը	-82,442	-16,87	3,796	0.79
Շահութահարկի գծով ծախս	5,500	-1,13	90,533	18.79

26. Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի և այլ ցուցանիշների վրա, ներառյալ՝ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք համարվում են ընդունելի տվյալ հանգամանքներում:

26.1 Կարևոր հաշվապահական գնահատումներ

Ընկերությունն իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները, որպես կանոն, չեն համապատասխանում իրական արդյունքներին: Ստորև ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա է ռիսկ, որ հաջորդ ֆինանսական տարում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն էական ճշգրտումների:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետները

Ընկերության ղեկավարությունը գնահատել է հիմնական միջոցների օգտակարության ժամկետները 20 տարի շենքերի համար, 8 տարի մեքենաների և սարքավորումների համար , 5-8 տարի տրանսպորտային միջոցների և տնտեսական գույքի համար 5 տարի: Ընկերության ղեկավարությունը հավատացած է, որ այդ ակտիվների գնահատված օգտակարության ժամկետները էականորեն չեն տարբերվում սպասվելիք տնտեսական ժամկետներից: Եթե այս գնահատումները փոխվեն ապա Ընկերության ֆինանսական հաշվետվությունները էականորեն կտարբերվեն:

Հետաձգված հարկի գնահատում

Ինչպես նկարագրված է ծանոթագրություն 12-ում 6,910 հազար դրամի հետաձգված հարկեր են ճանաչվել: Հետաձգված հարկերն ավելանում են արձակուրդի պահուստից և հիմնական միջոցներից: Ընկերության ղեկավարությունը հավատացած է, որ Ընկերությունն ապագայում կունենա բավարար հարկվող շահույթ, որպեսզի փոխհատուցի հետաձգված հարկային ակտիվները: Եթե Ընկերությունն ապագայում չկարողանա ստանալ հարկվող շահույթ, ապա հետաձգված հարկային ակտիվները չեն փոխհատուցվի:

27. Ֆինանսական գործիքներ

27.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի, ֆինանսական պարտավորության, և բաժնային գործիքի յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3.7-ում:

27.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված մնացորդները վերաբերում են ակտիվների և պարտավորությունների հետևյալ կատեգորիաներին.

Ֆինանսական ակտիվներ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դեբիտորական պարտքեր		
Առևտրային դեբիտորական պարտքեր	895,241	1,777,855
Տրված փոխառություններ	1,603,456	2,837,218
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	126,797	48,048
	2,625,494	4,623,121

Ֆինանսական պարտավորություններ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Փոխառություններ և վարկեր	4,039,704	4,224,337
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	1,080,033	705,713
	5,119,737	4,930,050

28. Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Ֆինանսական գործիքների հետ կապված՝ Ընկերությունը ենթարկվում է զանազան ռիսկերի: Այս ռիսկերն են շուկայական ռիսկը, պարտքային ռիսկը և իրացվելիության ռիսկը:

Ընկերությունը չի ներգրավված սպեկուլյատիվ նպատակներով ֆինանսական ակտիվների ակտիվ առքուվաճառքի գործարքներում, ինչպես նաև չի թողարկում օպցիոններ: Առավել էական ֆինանսական ռիսկերը, որոնց Ընկերությունը կարող է ենթարկվել, նկարագրված են ստորև:

28.1 Ֆինանսական ռիսկի գործոններ

ա) Շուկայական ռիսկ

Ընկերության գործունեությունն ուղղակիորեն ենթարկվում է արտարժութային, տոկոսադրույքային ռիսկերի փոփոխությունների ազդեցությանը և կապիտալի գնային ռիսկին (տես՝ բ) ստորև):

բ) Արտարժութային ռիսկ

Ընկերությունը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

Արտարժութային ռիսկը Ընկերության ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների վրա ունի հետևյալ ազդեցությունը՝

Հոդված	ԱՄՆ դոլար	Եվրո	Ռուբլի
2023թ.			
Ֆինանսական ակտիվներ			8.504
Առևտրային դեբիտորական պարտքեր			
Փոխառություններ			
Մնացորդներ դրամարկղում և բանկերում			8.504
Ֆինանսական պարտավորություններ	255,501		
Վարկեր և փոխառություններ			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր			3,837
	255,501		3,837
Զուտ արդյունք	-255,501	-	4,667

Հոդված	ԱՄՆ դոլար	Եվրո	Ռուբլի
2022թ.			
Ֆինանսական ակտիվներ			13
Առևտրային դեբիտորական պարտքեր	516,293		
Փոխառություններ			
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	516,293	-	13
Ֆինանսական պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր			3,615
	-	-	3,615
Զուտ արդյունք	516,293	-	-3,602

Ընկերությունը հիմնականում ենթարկվում է ԱՄՆ դոլարի, եվրոյի և ռուբլու փոխարժեքի ազդեցությանը: Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Ընկերության զգայունությունը՝ ԱՄՆ

դոլարի, եվրոյի, և ռուբլու նկատմամբ դրամի 10% աճին/նվազմանը: 10%-ը ղեկավարության կողմից գնահատված փոխարժեքի հավանական փոփոխությունն է: Զգայունության վերլուծությունը ներառում է միայն արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների մնացորդները և ժամանակաշրջանի վերջում ճշգրտում դրանց փոխարկումը՝ փոփոխելով փոխարժեքը 10%-ով:

Հազար դրամ	ԱՄՆ դոլարի ազդեցութ. 2023թ.	Եվրոյի ազդեցութ. 2023թ.	ռուբլու ազդեցութ. 2023թ.	ԱՄՆ դոլարի ազդեցութ. 2022թ.	Եվրո 2022թ.	ռուբլու ազդեցութ. 2022թ.
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	-25,550	-	467	51,629	-	-360

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Ընկերությունը կորուստներ կարող է կրել: Հաշվետու ամսաթվի դրությամբ նշանակալի պարտքային ռիսկի կենտրոնացում առկա չէ: Առավելագույն պարտքային ռիսկը ներկայացված է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ յուրաքանչյուր ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքով:

դ) Իրացվելիության ռիսկ

Ընկերությունը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ պահելով բավարար դրամական միջոցներ և դրանց համարժեքներ, ինչպես նաև բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ ժամանակին գործառնական պարտավորությունները մարելու նպատակով:

28.2 Կապիտալի ռիսկի կառավարում

Ընկերությունն իր կապիտալը կառավարում է այնպես, որպեսզի ապահովի իր անընդհատ գործելու հնարավորությունն առավելագույնին հասցնելով բաժնետերերի եկամուտները՝ փոխառու և կապիտալ միջոցների օպտիմալ համապատասխանություն ապահովելու միջոցով:

Ընկերության կապիտալը կազմված է սեփական կապիտալից, որը ներառում է թողարկված կապիտալը, կուտակված շահույթը:

Ընկերության ղեկավարությունը պարբերաբար վերանայում է կապիտալի կառուցվածքը, որպեսզի ապահովի փոխառու միջոցների և սեփական կապիտալի մնացորդների առավելագույն օպտիմալ համապատասխանություն, որը վերլուծվում է՝ ընդհանուր կապիտալը բաժանած ընդհանուր ֆինանսավորման վրա: Հաշվարկը ներկայացվում է ստորև.

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ընդհանուր սեփական կապիտալ	835,428	1,328,213
Հանած՝ դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	-126,797	-48,048
Կապիտալ	708,631	1,280,165
Ընդհանուր սեփական կապիտալ	835,428	1,328,213
Վարկեր և փոխառություններ	4,039,704	4,224,337
Ընդհանուր ֆինանսավորում	4,875,132	5,552,550
Կապիտալի և ընդհանուր ֆինանսավորման հարաբերակցություն	0.15	0,23

28.3 Իրական արժեք

Ղեկավարության համոզմամբ՝ ֆինանսական հաշվետվություններում ամորտիզացված արժեքով ճանաչված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները գրեթե հավասար են դրանց իրական արժեքին:

29. Պայմանականություններ

29.1 Գործարար միջավայր

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները, ինչպես նաև իրավական, հարկային և օրենսդրական համակարգերի զարգացումը շարունակական բնույթ են կրում: Հայաստանի տնտեսության կայունությունը և զարգացումը մեծապես կախված է այս փոփոխություններից: Կառավարությունը հաստատել է արդյունավետ կառավարման իր հանձնառությունը, որը ենթադրում է հակակոռուպցիոն ջանքեր, թափանցիկություն և հաշվետվողականություն:

Ընկերության ղեկավարությունը գտնում է, որ իրացվելիության ընթացիկ մակարդակը բավարար է կայուն գործունեության համար: Ընկերությունը պարբերաբար վերանայում է իր իրացվելիության մակարդակը և, անհրաժեշտության դեպքում, պատրաստ է կիրառել իրացվելիության աջակցության համապատասխան գործիքակազմ:

Տվյալ ֆինանսական հաշվետվությունները չեն արտացոլում վերը նկարագրվածի հնարավոր ապագա ազդեցությունը Ընկերության գործունեության վրա:

29.2 Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Ընկերությունը՝ իր ակտիվների, գործունեության ընդհատման կամ երրորդ կողմերի պարտավորությունների հանդեպ, որոնք կարող են առաջանալ գույքին կամ շրջակա միջավայրին Ընկերության գույքի կամ գործառնությունների պատահարներից հասցված վնասի ապահովագրություն չունի: Քանի դեռ Ընկերությունը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և ֆինանսական դրության վրա:

29.3 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է՝ հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ, որը հաճախ մեկնաբանություններ է պահանջում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են առաջադրել տուգանքներ և տույժեր:
Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ՝ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել:

30. Կապակցված կողմերի բացահայտում

Ընկերությունը չի հանդիսանում և չունի դուստր կազմակերպություն, չունի իր նկատմամբ վերահսկողություն կամ նշանակալի ազդեցություն ունեցող կազմակերպություն, չունի ասոցացված կազմակերպություններ, չի հանդիսանում համատեղ ձեռնարկման կողմ:

Ընկերությունը վերահսկվում է մասնակցի կողմից:
Ընկերությունների միջև փոխկապակցված գործարքներ են համարվում

- Ընկերության հիմնադիր Արմեն Կարապետյանի հետ կնքված փոխառության պայմանագիրը

	մն. 31.12.2023	մն. 31.12.2022
Արմեն Կարապետյան	1,417,807	2,232,000

- Ընկերության բաժնետեր Ա. Կարապետյանը հանդիսանում է նաև Լույս էներջի ՓԲԸ –ի բաժնետեր, որոնց միջև իրականացվել են շինարարական աշխատանքների 359,008 հազ դրամ արժեքով :

Ղեկավար անձնակազմի աշխատավարձը ժամանակաշրջանի ընթացքում կազմել է

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
25,538	25,672

31. Շրջակա միջավայրի հետ կապված խնդիրներ

Ղեկավարության համոզմամբ՝ Ընկերությունը բավարարում է շրջակա միջավայրի հետ կապված ՀՀ օրենսդրության պահանջները և վստահ է, որ Ընկերությունը շրջակա միջավայրի հետ կապված ընթացիկ էական պարտավորություններ չունի: Այնուամենայնիվ, Հայաստանում շրջակա միջավայրի վերաբերյալ օրենսդրությունը զարգացման փուլում է, և դրա հավանական փոփոխություններն ու օրենսդրության մեկնաբանությունները ապագայում կարող են էական պարտավորություններ առաջացնել:

32. Գրավներ

Ընկերությունը ԱՅԴԻ բանկ ՓԲԸ ում ունի հետևյալ գրավները
- դրամական հոսքեր 2,500,000 հազ դրամ
- Տաշիր Կապիտալ ՍՊԸ-ի կողմից տրված վարկային երաշխավորություն՝ 5,000,000 հազ. դրամ
- Տ-Քոնսթրաքշն ՓԲԸ-ի կանոնադրական կապիտալում Արմեն Ազատի Կարապետյանին պատկանող 100 տոկոս բաժնետոմս:

Ընկերությունը ԱԿԲԱ բանկ ՓԲԸ ում ունի հետևյալ գրավները
- Արմհոլդինգ ՓԲԸ երաշխավորություն
- Ինտեկո Էներգո ՓԲԸ-ի երաշխավորություն
- Ալֆրեդ Արթուրի Հարությունյանի 100 տոկոս բաժնետոմս:

33. Տրված երաշխիքներ

ԱՄԻՕ բանկի կողմից ընկերությանը տրամադրված երաշխիքները կազմում են 1,686,343 հազ. դրամ:

ԱԿԲԱ բանկի կողմից ընկերությանը տրամադրված երաշխիքները կազմում են 309,241 հազ. դրամ: